

չունէին. միայն յիշեալ Եղիովիտ գիւղին քահանայն կրնար տակաւին մերթ ընդ մերթ այցելել: Այս Եղիովիտ գիւղն ալ «այժմ ըստ կիսոյն դարձան ի տաճկութիւն»: Բնական էր որ բռնի նորագարձներէն գոնէ «ումանք կէ՛կէ» են հաւատովք, արտաքուստ միայն ցուցանելով զտաճկութիւն, (= մահամետականութիւն): Համշէնի մահամետականացեալք «Խօսին Տինչե-ցայժ հայերէն»: Իրերը շատ չէին փոխուած՝ երբ կը գրէր Հ. Մինաս Վ. Բժշկեան Տրապիզոնցի, որ անձամբ այցելած էր Սեւծովու ափերը¹. «Եթաչիքեար վանքը մեծ ուխտատեղի է, կ'ըսէ, «հայ եւ տաճիկ (մահամետական) վրան ուխտի կ'երթան» եւնէ: «Համշէնցիք կէ՛կէ» են. շատը դարձած են (մահամետականացած). բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն, ժամոց եւ ողորմութիւն պակաս չին ընել. գրեթէ ամէնքը վարդավառին եւ վերափոխման կ'երթան եկեղեցին, մոմ կը վառեն եւ մատաղ կ'ընեն իրենց պապերուն հօգուն համար. Բողոքը հայերէն կը խօսին: Ասոնց մէկ մասը Երուսաղէմ է՝ Սեւծովու գնացին.

¹ «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեւա Ծով» Վենետ. 1819, յտկ. § 144, հմտ. նաեւ § 82: